ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հայաստան

Աշխատանքային միգրացիա

***Ծրագրի նպատակը**՝ կանխել Հայաստանից ապօրինի աշխատանքային միգրացիան և խթանել արտերկրից վերադարձողների ինտեգրումը սեփական համայնքներում:*

Աշխատանքային միգրացիայի մասին «Գելըպ կազմակերպության վերջերս անցկացրած ուսումնասիրության համաձայն, Հայաստանում աշխատունակ մարդկանց միայն 25%-ն ունի մշտական աշխատանք: Նույն ուսումնասիրությունը բացահայտել է, որ մարդկանց մոտ մեկ երրորդը շահագրգռված է աշխատանք փնտրել արտասահմանում: Ռուսաստանը Հայաստանից մեկնողների համար հիմնական վայրն է: Չնայած այն բանին, որ Ռուսաստանում աշխատող հայերի թվաքանակի վերաբերյալ ճշգրիտ տվյալներ չկան, «Գելըպ -ի ուսումնասիրությունից պարզվել է, որ 31% հայերի ընտանիքի առնվազն մեկ անդամ աշխատում է Ռուսաստանում:

Փորձելով նվազագույնի հասցնել աշխատանքային ապօրինի միգրացիան, Ռուսաստանն ընդունել է կարգ, ըստ որի՝ ժամանակավոր աշխատանքի մեկնողները հնարավորություն ունեն երկիր ժամանելուց հետո ամիջապես օրինականացնել իրենց կարգավիճակը: Այնուամենայնիվ, աշխատելու նպատակով Ռուսաստան մեկնողներից շատերը դեռևս անտեղյակ են իրենց կարգավիճակն օրինականացնելու այս կարգից: Արդյունքում, Հայաստանից մեկնած մարդկանց ավելի քան 90%-ը շարունակում է Ռուսաստանում աշխատել անօրինական ձևով: Նրանց ապրելու և աշխատելու իրավունքի հանդեպ ոտնձգություններն ավելի շատ են և կազմակերպված մաքսանենգ ու թրաֆիքինգային սինդիկատների զոհը դառնալու հավանականությունն ավելի մեծ է, քան օրինական ճանապարհով գրանցված աշխատող անձանց գործում: Այն մարդիկ, ովքեր արտասահմանում աշխատելուց հետո իրապես ցանկություն ունեն վերադառնալ Հայաստան հաճախ դժվարություններ են ունենում աշխատանք գտնելու հարցում, քանզի նրանց համար Հայաստանում աշխատանքի հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության հուսալի աղբյուրները մատչելի չեն:

Հայաստանից աշխատանքային ապօրինի միգրացիան կանխելու և արտերկրից վերադարձող մարդկանց աջակցելու նպատակով Եվրասիա համագործակցություն հիմնադրամն իրականացնում է մի ծրագիր, որը հետամուտ է բարձրացնել ժամանակավոր աշխատանքի մեկնողների և արտերկրից վերադարձողների իրազեկությունը՝ որոշումներ կայացնելու համար:

Աշխատանքային միգրացիայի ըմբռնումը

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ նախաձեռնությամբ իրականացվում է հարավային Կովկասում տնային տնտեսությունների տնտեսական վարքի և սոցիալական վերաբերմունքի, այդ թվում՝ աշխատանքային միգրացիայի նկատմամբ վերաբերմունքի շուրջ ամենամյա ուսումնասիրություն: 2007թ. «Միգրացիայի միջազգային կազմակերպության աջակցությամբ վերոնշյալ կենտրոնն ուսումնասիրություն անցկացրեց Հայաստանի երեք մարզերում, որի թեման աշխատունակ մարդկանց շրջանում միգրացիայի նկատմամբ վերաբերմունքն էր: Ուսումնասիրության արդյունքները զետեղվեցին «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների վեբ կայքում www.crrccenters.org:

Հայաստանից մտավորականների միգրացիոն դեպքերի դրդապատճառները հասկանալու նպատակով Եվրասիա համագործակցություն հիմնադրամը 2008թ. գարնանը կանցկացնի գնահատում՝ անդրադառնալով հետևյալ հարցերին.

- որտեղ են գտնվում Հայաստանի առաջատար դպրոցների ու համալսարանների որոշ բաժինների շրջանավարտները
- բարձրագույն կրթությամբ միգրանտների ներկայիս և նախկինում ունեցած աշխատանքների տեսակները թե՛ արտերկրում, թե՛ Հայաստանում
- միգրանտների՝ վերադարձից հետո աշխատանք գտնելու հնարավորությունը
- միգրանտների կատարած գումարային փոխանցումները

Այս հետազոտությունը բիզնեսի և կառավարության ներկայացուցիչներին հնարավորություն կընձեռի ուղիներ գտնելու՝ կրթված երիտասարդ անձանց աշխատուժը Հայաստանում պահելու համար:

Եվրասիա հիմնադրամը մասնավոր կառավարվող, ոչ շահութաբեր կազմակերպություն է, որին աջակցում են ԱՄՆ կառավարությունը և այլ դոնորներ: 1992 թ-ից ի վեր Եվրասիա հիմնադրամը ներդրել է ավելի քան 370 միլիոն ԱՄՆ դոլար և իրականացրել ավելի քան 8400 դրամաշնորհային և տեխնիկական աջակցության ծրագրեր Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Ղազախստանում, Ղրղզստանի Հանրապետությունում, Մոլդովայում, Ռուսաստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ուկրաինայում և Ուզբեկստանում: Սկսած 1992 թ-ից՝ Եվրասիա հիմնադրամը Հայաստանում ներդրել է ավելի քան 30 միլիոն ԱՄՆ դոլար:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Եվրասիա հիմնադրամի հետնորդ կազմակերպությունն է:

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի նվիրատվության շնորհիվ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:

USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Կարողությունների զարգացում

2007 թ-ին Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Հայաստանի մարզերում արդեն իսկ գործող հասարակական կազմակերպությունների, համայնքապետարանների և միջհամայնքային միավորումների հետ համագործակցությամբ ստեղծեց յոթ «Աշխատանքային միգրացիայի և վերադարձի ռեսուրսային կենտրոններ : Գործակից կազմակերպություններին ընտրելու ժամանակ հաշվի առնվեցիվ նրանց՝ որպես ռեսուրս-կենտրոններ գործելու կարողությունները եւ ժամանակավոր աշխատանքի մեկնողներին ու արտերկրից վերադարձողներին ծառայելու հանձնառությունը: Կենտրոններից յուրաքանչյուրը ժամանակավոր աշխատանքի մեկնողներին, արտերկրից վերադարձողներին ու նրանց ընտանիքներին տրամադրում է խորհրդատվություն և տեղեկություններ աշխատանքի ու զբաղվածության մասին:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի աջակցությամբ կենտրոնների աշխատակիցները տեղեկություններ կհավաքեն միգրացիոն դրդապատճառների և արտերկրի միգրանտների առջև ծառացած դժվարությունների վերաբերյալ: Նրանք, այնուհետև, հիմնադրամի օգնությամբ կվերլուծեն այդ տվյալները: Վերլուծության արդյունքները կամփոփվեն զեկույցում և կուղարկվեն Հայաստանում միգրացիայի հարցերով զբաղվող պետական կառավարման մարմիններին: Այս մոտեցումը կհզորացնի կենտրոնների կարողությունները՝ վերահսկելու միգրացիոն դրդապատճառները սեփական համայնքներում և բարելավելու աշխատանքային միգրանտներին ու վերադարձողներին մատուցվող ծառայությունների որակը:

Համագործակցություն

Սույն ծրագրի շրջանակներում Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությունը համագործակցում է Ռուսաստանում իր գործընկեր՝ «Նոր Եվրասիա հիմնադրամի հետ: Համագործակցության արդյունքում նախատեսվում է կապեր հաստատել Հայաստանի «Աշխատանքային միգրացիայի և վերադարձի ռեսուրսային կենտրոնների և Ռուսաստանի նմանատիպ կենտրոնների միջև: Արդյունքում այդ կենտրոնների աշխատակիցները հնարավորություն կունենան ուսումնասիրել Ռուսաստանում աշխատանքային միգրացիայի մասին գործող օրենսդրությունը, ժամանակավոր աշխատանքի մեկնողներին ու արտերկրից վերադարձողներին հանդիպող դժվարությունները, ինչպես նաև համագործակցություն հաստատել՝ տեղեկատվությունը փոխանակելու և գործընկերության նոր ուղիներ փնտրելու համար:

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Նունե Սարգսյան
Ինտերնյուս-Հայաստան

Արտաշես Թերզյան
Investment Bank Trust,
National Bank Trust,
Ռուսաստան

Մարգարիտա Փիլիպոսյան
Հայ օգնության ֆոնդ

Դավիթ Հովհաննիսյան
Երևանի պետական համալսարանի մշակույթի և քաղաքակրթության կենտրոն

Արա Համազասպյան
«Իզմիրլյան հիմնադրամի երևանյան գրասենյակ

Արսեն Ղազարյան
Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

Եվրասիա
համագործակցություն
հիմնադրամ

Հասցե՝ 0009, ՀՀ, ք. Երևան,
Զարոբյան փ. 56
Հեռ.՝ (374 10) 58 60 95
Ֆաքս՝ (374 10) 58 60 96

info@epfound.am
www.epfound.am